ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հունվարի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

2
(3211)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

«ԼՈՊԱՔԱՑԵԼ Է, ՄՏԵԼ ԲՈՒՆԸ»

Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, որը առանձնապես չի փայլում իր խոսքով եւ հաճախ է խուսափում լրագրողներից, սովոր է, որ իր սրտի ցանկությունը պետք է արտահայտի ստատուսների միջոցով, սակայն դրանք բարձրաձայնել Խաչատրյանը վարանում է: Հենց սոցցանցի իր էջում Խաչատրյանի մի հայտարարությունը դարձավ ճակատագրական, որի հիման վրա Վահրամ Խաչատրյանի նկատմամբ հարուցվեց վարույթ: Բանն այն է, որ Վահրամ Խաչատրյանը սոցցանցի իր էջում անդրադարձել էր ԱԺ պատգամավոր Տիգրան Աբրահամյանի հայտարարություններին եւ գրել. «Սերժը մի պատգամավոր ունի՝ Տիգրան Աբրահամյան անունով: Սա եթերում լոպազացել է Արգիշտի Մեխակյանի մասով ու մտել է բունը: Բնից դուրս արի, Տիգրան, հել դիմացներս, ինչքան շուտ հելնես, էդքան քո բաժին չափալախը շուտ կստանաս»:

Արդյունքում աջ ու ձախ չափալախ բաժանող Խաչատրյանի նկատմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ է հարուցել:

10-ից ավել ձերբակալություններ են եղել Էջմիածնի քաղաքապետի ընտրություններում «Հայրենիք» կուսակցության աջակիցների շրջանում: ArmLur.am-ին հասած տեղեկություններով՝ ձերբակալությունները կապված են ընտրություններին կաշառքի դիմաց քվեարկելու դեպքերի հետ: Փորձեցինք տեղեկությունը պարզել Հակակոռուպցիոն կոմիտեից, որտեղից ի պատասխան հայտնեցին. «Ընտրակաշառք տալու եւ ստանալու դեպքերի առթիվ դեռեւս 2025 թվականի դեկտեմբերին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւս 13 անձանց նկատմամբ: Վերջիններս մեղադրվում են Վաղարշապատ համայնքում 2025 թվականի նոյեմբերի 16-ին ավագանու ընտրություններին «Հայրենիք» կուսակցության օգտին քվեարկելու դիմաց ընտրակաշառք ստանալու եւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ընտրակաշառք տալուն օժանդակելու մեջ: Նախաքննության ներկա փուլում նշված քրեական վարույթի շրջանակում որպես մեղադրյալ է ներգրավված ընդհանուր 23 անձ»:

Աայր Աթոռը հայտնում է նոր նշանակումների մասին. «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Գերաշնորհ Տ. Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմի առաջնորդի պաշտոնից, նշանակվել է Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդ: Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Գուսան ծայրագույն վարդապետ Ալճանյանը Հայրապետական տնօրինությամբ ազատվել է իր պաշտոնից: Մեկ այլ տնօրինությամբ քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանը համատեղության կարգով նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ»:



Հունվարի 15-ին՝ ժամը 23:05-ին, Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում տված 30-ամյա քաղաքացին հայտնել էր, որ բանկային քարտը կորցրել է, եւ նույն օրը անհայտ անձը քարտից 96 հազար դրամ է օգտագործել: Մաշտոցի բաժնի համայնքային ոստիկանները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են տվյալ բանկային քարտով գնումներ կատարած քաղաքացու ինքնությունը: 63-ամյա տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Նրա անձնական խուզարկությամբ 30-ամյա քաղաքացու բանկային քարտը հայտնաբերվել է: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին: Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԶՐՈՒՅՑ

ԵՍ ՉԷԻ ՈՒԶԻ ԵՂԲՈՐՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԱՌԵՎՏՐՈՎ ԼԻՆԵՐ

Հարցազրույց «Վերածնվող Արցախ» հասարակական կազմակերպության նախագահ Անաստաս Իսրայելյանի հետ:

-Պարոն Իսրայելյան, դեկտեմբերի 24-25-ին Ժնեւյան գրասենյակի միջնորդությամբ հնարավոր եղավ Կարմիր Խաչի այցելությունը Բաքվում պահվող հայ գերիներին, այդ թվում, ձեր հարազատին՝ Ռաշիդ Բաբայանին, ում Բաքուն դատապարտել է 15 տարվա ազատազրկման: Վերջին այցելությունից Ձեզ ի՞նչ է հայտնի, ինչպե՞ս են նրանք:

-Ընդհանրապես, նման տեղեկություններ մենք չունենք, որ իրեն արդեն դատապարտել են 15 տարվա ազատազրկման: Այդ դատական պրոցեսի վերաբերյալ հստակ տեղեկություններ չունենք: Խնդրի հետ կապված՝ տարբեր միջազգային ներկայացուցիչների կամ կառույցների մասնակցությամբ կամ արդեն որ թույլ են տվել գնալ ու տեսակցել, մի քիչ հույս է առաջացրել մեզ մոտ: Ադրբեջանը, եթե թույլ է տվել Կարմիր Խաչին տեսակցել, ուրեմն նրանց դա պետք էր՝ ցուցադրելու, որ գերիների վիճակն այդքան էլ վատ չէ: Իհարկե, նրանց եւ հարազատների հոգեբանությունը հասկանալի է, բայց կարող եմ նաեւ ասել, որ վերջերս հայրենիք վերադարձած 4 գերիների փաստը ոգեւորեց նաեւ մյուսներին:

-Այն հանգամանքը, որ հայրենադարձածները դատապարտված էին 15-20 տարվա ազատազրկման, Ձեզ հո՞ւյս է ներշնչում, որ Ձեր հարազատ Ռաշիդ Բեգլարյանին եւս ազատ կարձակեն:

-Մենք, ականատես լինելով Արցախի իրադարձությունները, դրան հաջորդող դավաճանական իրադարձությունները, նկատում եմ ծրագրված համագործակցություն: Մշտապես հետեւելով, ուսումնասիրելով մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունները ՝ հանգել եմ այն եզրակացության, որ սա մի հատ խաղ է, որի մեջ ներառված են ՀՀ գործող իշխանությունը եւ Ադրբեջանի ղեկավարությունը: Օրինակի համար նշեմ, որ ամեն օր մենք ականատես ենք լինում իրադարձությունների, որոնք կարծես թե փոխկապակցված լինեն, զուգահեռաբար միասնական մոտեցումները, որոնք տեղի են ունենում հիմնականում խաղաղության անվան տակ:

Ժողովրդին, մեր հայրենիքը առեւտրի մաս են դարձրել: Նույնը տեսնում ենք գերիների հետ կապված: Դա ինձ համար ցավալի տեսարան է, նույն սրիկայությունը իրենց համար էական չէ հողի, իրավունքի, ազատության մեջ գտնվող մարդու, թե գերիների նկատմամբ են անում: Ամեն դեպքում կարծում եմ, մեր բոլոր գերիներն էլ ժամանակի ընթացքում վերադառնալու են, որովհետեւ ներկա իշխանությունը եւ Ալիեւը փորձում են իրենց մեղքերը, պատասխանատվությունը արդարացնել կամ փոքր-ինչ թեթեւացնել գերիներ վերադարձնելով կամ խաղաղություն բառը շահարկելով: Սակայն նրանք երկուսն էլ գերտերությունների կողմից կառավարվում են եւ ստիպողական ճանապարհով, թե իրենց իսկ ցանկությամբ վաղ թե ուշ իրենք վերադարձնելու են մեր բոլոր գերիներին: Նրանք երկուսն էլ կամակատար են եւ ինչ ասեն, դա էլ կանեն:

-Նշեցիք, որ ժամանակի ընթացքում բոլոր գերիները վերադառնալու են: Կարծում եք եւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությո՞ւնը կվերադառնա:

-Կարծում եմ այո: Խաղաղության անվան տակ, կարծում եմ, կվերադառնան նաեւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչները: Ես, իհարկե, չեմ ուզի, որ իմ եղբայրը հայրենք վերադառանա առեւտրի մթնոլորտում: Ինձ համար դա ցավալի կլինի: Այնտեղ գտնվող մարդիկ արժանապատիվ մարդիկ են, նրանք իրենց արժանապատվությունը մինչեւ օրս էլ պահպանում են, իրենց հայ լինելու կերպարը, պատիվը պահում են: Արցախի հայկական լինելն են պահում: Առաջնային են դասում իրենց ազգային սկզբունքները: Այս գործողություններն ու ամեն ինչ նախօրոք ծրագրված է եղել: Նրանք այսօր անգամ չեն էլ թաքցնում: Նրանք այսօր ասում են՝ մենք Արցախը հանձնել եք, մենք ձեզ դավաճանել ենք, մեզ թուրք էլ ասեք եւ դրա համար չեն պատժվում: Մարդու անպատիժ մնալուց էլ շարունակվում են սխալ գործողությունները: Այս ամենը կարող ենք շտկել, այդ հնարավորությունը մենք ունենք համապետական ընտրություններին: Ժողովուրդը ունի իր ընտրությունը. ինչպիսինն է ուզում իրեն տեսնել ապագայում՝ որպես հմ, թե՞ նվաստացած:

Բոլորը մեզ ուզում են գնել փողով ու շահով: Եթե մենք ընտրենք փողն ու շահը, ապա իմացած եղեք, որ նույն իրավիճակն է լինելու:

-«Վերածնվող Արցախ» հասարակական կազմակերպության շրջանակներում ի՞նչ գործունեություն եք հիմա ծավալում: Արցախցիները հայտարարել են, որ մարտ ամսվա վերջում սկսելու են փողոցային շարժում, Դուք միանալո՞ւ եք նրանց:

-Մենք միշտ ողջունել ենք նման պայքարը, այս անգամ էլ բացառություն չի լինելու, միանշանակ, մասնակցելու ենք: Մեր առաջնահերթությունը ժողովրդի շահն է: Ես միշտ առաջնագծում եմ եղել՝ թե Արցախում, թե մայր հայրենիքում: Մեր գերնպատակն է հիմա մաքսիմալ կանխել արցախցիների արտագաղթը մայր հայրենիքից: Մենք պետք է մնանք ու պայքարենք մեր Արցախ վերադարձի համար:

Մենք չկոտրվող ազգ ենք, բայց մեզ միասնականություն է պետք: Մենք ծայրահեղական ենք՝ ընկնում ենք, հետո վերածնվում, պայքարում, ջախջախում, հաղթում: Սա էլ մեր պատմության էջերն է:

Զրուցեց ՆԱՆԻԿ ՂԱՍՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության եւ Իտալիայի Հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ Հռոմում տեղի են ունեցել հերթական քաղաքական խորհրդակցությունները՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի եւ Իտալիայի ԱԳ եւ միջազգային համագործակցության նախարարի տեղակալ Էդմոնդո Չիրիելլիի գլխավորությամբ:

Այս մասին հայտնում են ՀՀ արտաքին գործերի նախարարությունից:

Նշվում է, որ խորհրդակցությունների ընթացքում անդրադարձ է կատարվել վերջին տարիներին երկկողմ հարաբերությունների զարգացման դրական դինամիկային՝ ընդգծելով բարձրաստիճան շփումների նշանակալի դերը կառուցողական քաղաքական երկխոսության խթանման, տնտեսական համագործակցության հետագա ամրապնդման եւ ընդլայնման գործում:

«Քննարկվել է երկկողմ օրակարգային հարցերի լայն շրջանակ: Կողմերն ընդգծել են մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ երկկողմ առեւտրաշրջանառության ծավալների աճի, ներդրումների խթանման, բարձր տեխնոլոգիաների, զբոսաշրջության, կրթության, մշակույթի եւ այլ ոլորտներում համագործակցության զարգացման նպատակով համատեղ քայլերի իրագործման կարեւորությունը»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԱԳՆ-ի փոխանցմամբ՝ զրուցակիցները քննարկել են նաեւ Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի հարցեր, ինչպես նաեւ 2026թ. Հայաստանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթաժողովի եւ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP17) նախապատրաստական աշխատանքները:

Հաղորդվում է, որ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը ներկայացրել է 2025թ. օգոստոսի 8-ից հետո Հարավային Կովկասում զարգացումները: Ի թիվս այլնի՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալն անդրադարձ է կատարել ընթացիկ տարվա հունվարի 13-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի հանդիպման շրջանակներում «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (ԹՐԻՓՓ) նախագծի՝ Հայաստան-ԱՄՆ իրականացման շրջանակի ընդունմանը:

ԱԺ-Ն ԸՆԴՈՒՆԵՑ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց օրենքի նախագիծը, որը 27 տարին լրացած եւ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին հնարավորություն է տալիս վերադառնալ հայրենիք, ծառայելու եւ գումար վճարելու եղանակով մարել ՀՀ-ի առջեւ ունեցած իրենց պարտքը:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը քվեարկությամբ ստացավ 87 կողմ, 5 ձեռնպահ ձայներ: Նախագծով առաջարկվում է 27-37 տարեկան քաղաքացիներին հնարավորություն տալ ազատվել քրեական պատասխանատվությունից՝ կամովին վերադառնալով Հայաստան եւ ընտրելով հինգ տարբերակներից մեկը՝ ծառայել 24 ամիս, ծառայել 12 ամիս եւ վճարել 2.5 մլն դրամ, ծառայել 6 ամիս եւ վճարել 5 մլն դրամ, ծառայել 1 ամիս եւ վճարել 10 մլն դրամ, զինվորական ծառայության փոխարեն պետական բյուջե վճարել 15 մլն դրամ:

«Նախագծին մեր հազարավոր քաղաքացիներ երկար են սպասել: Նախագծով 27 տարին լրացած եւ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները հնարավորություն կունենան վերադառնալ հայրենիք՝ ծառայելով եւ գումար վճարելով մարել Հայաստանի առջեւ ունեցած իրենց պարտքը եւ նոր կյանք սկսել Հայաստանում»,-ասաց Հայկ Սարգսյանը քվեարկությունից հետո: Նա շնորհակալություն հայտնեց «Հայաստան» խմբակցությանը՝ իր հեղինակած նախագծին կողմ քվեարկելու համար: Պատգամավորը նաեւ տարակուսանք հայտնեց, թե ինչու «Պատիվ ունեմ» խմբակցությունը եւս կողմ չքվեարկեց:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Հունվարի 27-ը կսահմանվի Հանուն հայրենիքի զոհվածների հիշատակի եւ խոնարհումի օր եւ կլինի ոչ աշխատանքային: ՀՀ Ազգային ժողովն այսօր 69 կողմ, 15 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ընդունեց կառավարության առաջարկած նախագիծը:

Նշենք, որ նախագծի համահեղինակներն են ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանն ու անկախ պատգամավոր Գեղամ Նազարյանը:

Օրինագծի հիմնավորման մեջ, մասնավորապես, նշվել է, որ չկա հատուկ օր՝նվիրված բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների եւ այլ անձանց հիշատակը հարգելուն եւ մեծարելուն: Հետեւաբար, մարդիկ զոհվածների հիշատակը հարգում են կամ տարբեր ռազմական իրադարձությունների նշման, կամ հունվարի 28-ին՝ Բանակի օրը, որն ավելի շատ տոնական օր է, քան հիշատակի:

Հիշեցնենք, որ արցախյան վերջին պատերազմներից եւ ոչ մեկի հետ այս ամսաթիվը չի համընկնում: 2016թ.-ի քառօրյա պատերազմը մեկնարկեց ապրիլի 2-ին, 2020-ի 44-օրյան՝ սեպտեմբերի 27-ին, իսկ արդեն 2023-ի սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ Արցախի վրա Ադրբեջանի լայնածավալ հարձակումը, որին հաջորդեց էթնիկ զտումը:

Նշենք, որ 2024-ի հոկտեմբերի 17-ին այն ժամանակ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Նազարյանը օրենքի նախագիծ էր ներկայացրել, որով առաջարկում էր սեպտեմբերի 27-ը սահմանել որպես հիշատակի օր: ՀՀ կառավարությունը մերժեց այս նախագիծը՝ հիմնավորելով, թե հունվարի 28-ին նշվող Բանակի օրը հանդիսանում է ոչ միայն ՀՀ զինված ուժերի կազմավորման արժեւորում, այլ նաեւ ներառում է բոլոր ժամանակներում Հայաստանի պաշտպանության ապահովման գործում ավանդ ունեցող, այդ թվում՝ կյանքը զոհած անձանց հիշատակի ոգեկոչումը:

ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Եվրոպական Միության 27 երկրների առաջնորդները կհանդիպեն «առաջիկա օրերին»՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ Գրենլանդիան բռնակցելու սպառնալիքներին արձագանքները քննարկելու համար, ավելի վաղ հայտարարել էր Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիո Կոշտան:

Կոշտան Եվրոպական խորհրդի արտահերթ նիստ է հրավիրել այն բանից հետո, երբ կիրակի օրը Բրյուսելում հավաքվել են ԵՄ երկրների դեսպանները, որպեսզի քննարկեն Թրամփի հայտարարությունն այն մասին, որ ինքը կգնի Գրենլանդիան եւ մաքսատուրքերով կպատժի ԵՄ այն երկրներին, որոնք կկանգնեն իր ճանապարհին:

Ըստ ԵՄ ներկայացուցչի եւ ծրագրերին իրազեկ դիվանագետի՝ գագաթնաժողովը նախատեսված է հունվարի 22-ին, հայտնում է Politico-ն: Հանդիպումը լինելու է «առկա» ձեւաչափով, այսինքն՝ կպահանջվի առաջնորդների անձնական ներկայությունը, այլ ոչ թե վիրտուալ հեռախոսակոնֆերանսի տարբերակով:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Շվեյցարիա կատարած աշխատանքային այցի շրջանակում Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն այցելել է Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոն (CERN)՝ համաշխարհային գիտական առաջատար կենտրոններից մեկը:

Այցի ընթացքում նախագահը շրջել է կենտրոնի լաբորատոր համալիրներում, ծանոթացել իրականացվող կիրառական եւ գիտահետազոտական աշխատանքներին, ինչպես նաեւ CERN-ում գործող միջազգային գիտական ու կրթական ծրագրերին:

Նշվել է, որ 1998 թվականից CERN-ն իրականացնում է ուսուցիչների վերապատրաստման միջազգային ծրագիր, որը միտված է ֆիզիկայի եւ հարակից բնագիտական առարկաների դասավանդման որակի բարձրացմանը: Ծրագրին մինչ օրս մասնակցել են հազարավոր ուսուցիչներ աշխարհի տարբեր երկրներից: Այդ նախաձեռնության շրջանակում գործում է նաեւ հայ ուսուցիչների համար նախատեսված առանձին ծրագիր, որի շրջանակում 2024 թվականին առաջին անգամ հայաստանցի ուսուցիչների խումբը վերապատրաստում է անցել CERN-ում:

Հանրապետության նախագահը հանդիպել է նաեւ ընթացիկ տարվա վերապատրաստման ծրագրի շրջանակում CERN-ում գտնվող հայաստանցի ուսուցիչների խմբի հետ: Զրույցի ընթացքում քննարկվել են ծրագրին մասնակցության ընթացքը, ձեռք բերված մասնագիտական փորձը եւ դրա կիրառման հնարավորությունները Հայաստանի կրթական համակարգում:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը կարեւորել է նման նախաձեռնությունների շարունակականությունը՝ ընդգծելով կրթության եւ գիտության զարգացման մեջ միջազգային համագործակցության առանցքային դերը:

ԻՐԱՆԻ ՀԱՄԱՐ «ՆՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ»

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ Անկարան միասնական եւ տարածքային առումով ինտեգրված Սիրիան համարում է տարածաշրջանային կայունության եւ բարգավաճման անհրաժեշտ պայման, հաղորդում են տեղական լրատվամիջոցները:

Թուրքիայի նախագահը հայտարարել է, որ Անկարան կշարունակի աջակցել Սիրիայի իշխանություններին՝ քրդերի դեմ պայքարում եւ հավաստիացրել է, որ դեմ է հանդես գալու երկրի միասնությունն ու տարածքային ամբողջականությունը խաթարելու ցանկացած փորձի: «Մենք թույլ չենք տա սաբոտաժի ենթարկել այս գործընթացը»,-ասել է նա:

Էրդողանը Իրանում տեղի ունեցող իրադարձությունները անվանել է «նոր փորձություն» եւ հայտարարել, որ Թուրքիան հակազդելու է այն նախաձեռնություններին, որոնք կարող են տարածաշրջանը հասցնել քաոսի՝ իր աջակցությունը հայտնելով երկխոսության եւ դիվանագիտության ուղղությանը:

ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՂԲՈՐ ՈՐԴՈՒՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆ ՀՐԱՎԻՐԵԼ

Կաթողիկոսի եղբոր որդուն՝ Կորյուն Ներսիսյանին, հրավիրել են ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչություն եւ հարցաքննել:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս հարցաքննությունը պայմանավորված է Հայ առաքելական եկեղեցու հոգեւորականների դեմ հարուցված քրեական վարույթներով: Տեղեկությունը փորձեցինք պարզել նրա փաստաբան Էմին Խաչատրյանից:

Վերջինս հաստատեց, որ Կորյուն Ներսիսյանը ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում հրավիրվել եւ հարցաքննվել է, սակայն այլ մանրամասներ չի կարող հայտնել, քանի որ ստորագրել է նախաքննական գաղտնիքի տակ:

Նշենք, որ Շենգավիթ վարչական շրջանի դատախազի նախկին տեղակալ Կորյուն Ներսիսյանը տեւական ժամանակ կալանքի տակ է մնացել, իսկ վերջին ամիսների ընթացքում նրա խափանման միջոցը փոխվել է:

Ինչպես հայտնի է, 2022 թվականի հունիսի 11-ին Ազգային անվտանգության ծառայության կողմից՝ ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ, ձեռնարկված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ. Ն.-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալ Ն. Դ.-ի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելուն նպաստելու համար, պաշտոնեական դիրքն օգտագործելով, Գ. Գ.-ի եւ Ն. Ա.-ի օժանդակությամբ եւ միջնորդությամբ Ն. Դ.-ից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.500.000 ՀՀ դրամ կաշառք:

Կորյուն Ներսիսյանը չի ընդունում մեղադրանքը, իսկ գործը Հակակոռուպցիոն դատարանում արդեն շուրջ երեք տարի է՝ գտնվում է քննության փուլում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ԲԱՅՐԱՄՈՎԸ ԵՎ ՌՈՒԲԻՈՆ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը եւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հեռախոսազրույց են ունեցել: Նրանք քննարկել են Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի միջեւ երկկողմ համագործակցության ներկա վիճակը եւ հեռանկարները, ինչպես նաեւ տարածաշրջանային իրավիճակը եւ Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարը ԱՄՆ պետքարտուղարին ներկայացրել է Ադրբեջանի դիրքորոշումը Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման եւ խաղաղության հեռանկարների վերաբերյալ:

Դրական են գնահատվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կարգավորման գործընթացի շրջանակներում ձեռնարկված քայլերը, ինչպես նաեւ վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումները: Ընդգծվել է «Թրամփի երթուղին հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (TRIPP) նախաձեռնության իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների կարեւորությունը:

ԹՐԱՄՓԻ ՀՐԱՎԵՐԸ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ստացել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի պաշտոնական հրավերը՝ Խաղաղության խորհրդին որպես հիմնադիր անդամ միանալու վերաբերյալ:

Այս մասին տեղեկացնում է վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը. «Վարչապետ Փաշինյանը սիրով եւ պատասխանատվությամբ ընդունել է առաջարկը՝ վերահաստատելով Հայաստանի հանձնառությունը խաղաղության առաջմղմանը»:

ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ

ԱՄՆ Կոնգրեսում Դոնալդ Թրամփի՝ Գրենլանդիայի քաղաքականության նկատմամբ դժգոհությունը մեծանում է՝ ոչ միայն դեմոկրատների, այլեւ Հանրապետական կուսակցության շրջանում: Դրա պատճառը նախագահի հռետորաբանությունն է՝ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով կղզին ԱՄՆ-ին «միացնելու» հնարավորության մասին, հաղորդում է Bild-ը: Որոշ հանրապետականներ այս մոտեցումը համարում են վտանգավոր եւ նվաստացուցիչ իրենց դաշնակիցների համար:

Հանրապետական կոնգրեսական Դոն Բեյքոնը Թրամփի հայտարարությունների մասին ասել է. «Դա ամենահիմար բանն է, որ ես երբեւէ լսել եմ» եւ զգուշացրել է, որ դաշնակիցների վրա շարունակական ճնշումը կարող է հանգեցնել իմպիչմենտի գործընթացի:

Մյուս օրենսդիրները նշում են, որ Արկտիկայում ԱՄՆ ռազմական ներկայության ամրապնդումը կարող է հանգիստ քննարկվել գործընկերների հետ՝ առանց սպառնալիքների դիմելու:

Կոնգրեսն արդեն քննարկում է հնարավոր ռազմական լուծումը խոչընդոտելու օրենսդրական քայլերը: Սենատոր Թոմ Թիլիսը հայտարարել է, որ կարող է ձեւավորվել երկկուսակցական մեծամասնություն՝ պատերազմական լիազորությունների մասին բանաձեւ ընդունելու համար, որը կարգելի Գրենլանդիայի դեմ ցանկացած ռազմական գործողություն:

Նրա գործընկեր Լիզա Մուրկովսկին նշել է, որ Կոնգրեսն արդեն փորձում է հանգստացնել ՆԱՏՕ-ին եւ ԵՄ դաշնակիցներին, քանի որ Գրենլանդիայի շուրջ լարվածությունը սկսել է ազդել տրանսատլանտյան հարաբերությունների վրա:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՐՄԵՆ ԱՄԻՐՅԱՆԻ ԶԵՆՔԸ ԱՌԳՐԱՎՎԵԼ Է

ՆԳՆ ոստիկանությունը վերջին շրջանում փուլ առ փուլ ուսումնասիրում է քաղաքացիներին պատկանող զենքերի փաստաթղթերը եւ անգամ օրինական հիմքով ձեռք բերված զենքերի դեպքում պահանջում է դրանք հանձնել կամ ենթարկում է տեխնիկական վնասման՝ օգտագործման համար անպիտան դարձնելու նպատակով: Այս գործընթացը վերաբերում է ոչ միայն շարքային քաղաքացիներին, այլեւ պետական բարձր պաշտոն զբաղեցրած անձանց:

ՀՀ մշակույթի նախկին նախարար Արմեն Ամիրյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության՝Արմեն Արտավազդի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող «TAURUS» տեսակի (տրամաչափը՝ 6,35 մմ, սերիան՝ DUA-30491) զենքը մալելու գործողությունից ձեռնպահ մնալուն եւ այն չմալված վիճակում Արմեն Արտավազդի Ամիրյանին վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

«Զենքի մասին» 1998 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-246 օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով՝ զենքով պարգեւատրված անձինք մինչեւ 2025 թվականի հունիսի 1-ը պարտավոր են Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանություն ներկայացնել տվյալ անձի մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների բացակայությունը հավաստող բժշկական փաստաթղթեր, ինչպես նաեւ զենքի հետ կապված անվտանգության կանոնների իմացության տեսական եւ գործնական քննությունները հանձնելու մասին փաստաթուղթ:

Սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում զենքը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանությունը մալում է եւ վերադարձնում տիրոջը:

Դատելով իրավիճակից՝ բոլոր նրանք, որոնք օրենքի այս կետերին չեն ենթարկվում կամ չեն համապատասխանում, նրանց պատկանող զենքերը առգրավվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Իջեւան քաղաքի բնակիչ՝ 28-ամյա եւ Ոսկեպար գյուղի բնակիչ՝ 31-ամյա երկու երիտասարդ, նախնական համաձայնությամբ, պատրաստում եւ իրացնում են տարբեր տեսակի ալկոհոլային խմիչքներ:

Համայնքային ոստիկաններն ու Արմավիրի մարզի պարեկները համատեղ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Փարաքար գյուղի Երեւանյան փողոցում 31-ամյա երիտասարդին հայտնաբերել, ձերբակալել եւ «Օպել» մակնիշի մեքենայով հանդերձ՝ տեղափոխել են Վաղարշապատի բաժին:

Պարզվել է, որ Իջեւանի բնակիչ 28-ամյա երիտասարդը Ոսկեպար գյուղի 31-ամյա բնակչին է փոխանցել 342 շիշ տարբեր տեսակի կեղծ խմիչքներ, որոնք նա իրացնելու նպատակով պետք է տեղափոխեր Էջմիածին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 28-ամյա երիտասարդը Էջմիածին քաղաքի Գրիգոր Լուսավորչի փողոցում հայտնաբերվել եւ ձերբակալվել է:

«Օպելը» տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Երիտասարդները կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին:

1 ԿԳ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Հունվարի 14-ին Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժնի ծառայողներն ու Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելով՝ Երեւան քաղաքի գնդի պարեկների հետ համատեղ իրականացված ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Կոմիտասի պողոտայում հայտնաբերել ու թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալել են մայրաքաղաքի 27-ամյա եւ 40-ամյա 2 բնակչի:

27-ամյա երիտասարդի կողմից շահագործվող ավտոմեքենան տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի հատուկ պահպանվող տարածք: Վարորդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է գաղտնի փականով դանակ: 27-ամյա երեւանցին հայտնել է, որ ավտոմեքենայում մարիխուանա կա:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել է 1 կգ 177 գրամ մարիխուանայի նմանվող զանգված: Կատարվում է նախաքննություն:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Հունվարի 17-ին Բագրատաշենի սահմանային անցակետում հայտնաբերվել եւ Համայնքային ոստիկանության Նոյեմբերյանի բաժին է տեղափոխվել օտարերկրյա քաղաքացի 48-ամյա մի տղամարդ: Նա 2024 թվականի նոյեմբերի 16-ից Ֆրանսիայի Հանրապետության իրավապահների կողմից հետախուզվում էր գողության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Հետախուզվողի հայտնաբերման մասին տեղեկացվել է ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ:

49-ամյա տղամարդը ներկայացվել է նախաքննական մարմին:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 5-ի երեկոյան Ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնեց բնակարանային գողության վերաբերյալ: Քաղաքացուն այդ մասին տեղյակ էր պահել եղբայրը, որը տեսախցիկի միջոցով տեսել էր, որ մտել ու գողացել են երկու հեռուստացույց:

Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողները մեկնեցին դեպքի վայր: Նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակում ձեռնարկած անհրաժեշտ գործողություններից հետո քրեական ոստիկանները համագործակցեցին Համայնքային ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողների հետ:

Պարզվեց, որ հիշյալ գողությունը կատարել են Ստեփանավանի բնակիչ 36 եւ 37 տարեկան երկու տղամարդիկ:

Երկուսն էլ հայտնաբերվեցին Ստեփանավանում, ձերբակալվեցին ու տեղափոխվեցին Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչություն: Երկուսն էլ խոստովանեցին արարքը:

Գողացված հեռուստացույցներից մեկը հայտնաբերվել է:

Հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՌՈՅ ԴԵՊՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունվարի 14-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Երեւանում: Այդ օրը ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մարաշի բաժնի ծառայողները, ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի պարեկները ուժեղացված ծառայության ժամանակ նկատել են, որ Հերացի փողոցում «Lexus» մակնիշի ավտոմեքենան ընթանալիս ուղեւորները իջեցրել են ապակիները եւ հայհոյանքներ հնչեցրել ոստիկանության ծառայողների հասցեին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, այդ ամենից հետո Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի պարեկները Խանջյան 35 հասցեի մոտ կանգնեցրել են նշված ավտոմեքենան, որից հետո ավտոմեքենայից դուրս եկած ուղեւորները, խախտելով հասարակական կարգը, տեւական ժամանակ հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ՝ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության եւ ոստիկանության ծառայողների նկատմամբ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ նշված հասցեից խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածով ձերբակալվել եւ ոստիկանության Մարաշի բաժին են տեղափոխվել Արմավիրի մարզի բնակիչներ 43-ամյա Ռոման Մ.-ն, 43-ամյա Արտակ Ս.-ն, 48-ամյա Աշոտ Խ.-ն, 39-ամյա Վաղուշ Մ.-ն եւ 44-ամյա Գեւորգ Հ.-ն, իսկ ավտոմեքենան տեղափոխվել է ՊԾ Երեւան քաղաքի գնդի հատուկ պահպանվող տարածք:

Դեպքի փաստով ոստիկանության Մարաշի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

ՊԱՐԵԿՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի ծառայողները հունվարի 14-ին մայրաքաղաքի Թամանցիների փողոցում ստուգման նպատակով կանգնեցրել են «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենա: Պարզվել է, որ 56-ամյա վարորդը սթափ չէ:

Պարեկները հայտնել են, որ իրավախախտման համար նրա նկատմամբ կազմվելու է մեկ տարի ժամկետով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու վերաբերյալ արձանագրություն, իսկ մեքենան տեղափոխվելու է տուգանային հրապարակ: Ի պատասխան Եղվարդ քաղաքի բնակիչ վարորդը իրավախախտումը չարձանագրելու համար պարեկներին առաջարկել է նախ 40, այնուհետեւ 150 հազար դրամ կաշառք: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Հակակոռուպցիոն կոմիտե:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 16-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է 286 հանցագործություն, որոնցից 9-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐ ՉԵՆ

Էկոպարեկային ծառայությունում, հատկապես Տավուշի մարզում, շատ են թափուր պաշտոնները: Նախկին անտառապահների զգալի մասը, որոնք համապատասխան կրթություն չունեն, դարձել են էկոպարեկներ: Սակայն ոչ բարձր աշխատավարձը, կոնֆլիկտային աշխատանքը պատճառ են դարձել, որ Տավուշի մարզում էկոպարեկների տասնյակ հաստիքներ վաղուց թափուր են: Էկոպարեկային ծառայությունը Տավուշում էկոպարեկների հաստիքների համալրման մասին հայտնում է. «Էկոպարեկային ծառայության կադրային համալրման բազմափուլ գործընթացը թեւակոխեց իր ամենավճռական՝ հարցազրույցի փուլը, որն ամփոփում է ֆիզիկական պատրաստվածության ստուգումներն ու մասնագիտական գիտելիքները գնահատող մրցութային թեստավորումը: Անցկացված այս փուլը նպատակ ուներ բացահայտել այն թեկնածուներին, ովքեր ունեն ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ ու պատրաստվածություն, այլեւ տիրապետում են բարձրագույն անձնային որակների եւ էթիկայի՝ հանդիսանալու Ծառայության անբաժանելի մասը: Թափանցիկության սկզբունքի պահպանումը եղել է գործընթացի անկյունաքարը, ապահովելով հավասար հնարավորություններ բոլոր մասնակիցների համար: Հարցազրույցի արդյունքները կլինեն վերջնական գործոնը՝ որոշելու համար Տավուշի մարզային վարչության թափուր հաստիքները համալրող ապագա էկոպարեկային ծառայողներին»: Մինչդեռ էկոպարեկային ծառայության ղեկավարներն իրենք մասնագիտական կրթություն չունեն, անտառագետ, բնապահպան չեն: 2025թ. հոկտեմբերի 16-ին շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետ Վլադիմիր Կիրակոսյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Դուք, էկոպարեկային ծառայության շատ պաշտոնյաներ չունեն բնապահպանական, անտառագիտական կրթություն, այդ հանգամանքը չի՞ խանգարում էկոպարեկային ծառայության աշխատանքի արդյունավետությանը»: Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանը պատասխանել է. ««Էկոպարեկային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղարը եւ կենտրոնական մարմնի հիմնական աջակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ եւ վերջիններիս աշխատանքային հարաբերությունները, ինչպես նաեւ ծառայությունում պաշտոնների նշանակվելու պայմանները, ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության եւ աշխատանքային ստաժի չափանիշները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ծառայության պետի տեղակալներից մեկին շնորհված է «Ճարտարագետ-անտառագետ»-ի բակալավրի աստիճան՝ «Անտառային ճարտարագիտական գործ» մասնագիտությամբ եւ «Անտառագետի» մագիստրոսի աստիճան՝ «Անտառ-անտառպարտեզպուրակային տնտեսություն» մասնագիտությամբ»: Ղեկավար պաշտոնների նշանակելու գործը օրենքով կարգին է, սակայն էկոպարեկային ծառայության աշխատանքում առկա բազում խնդիրները նաեւ այդ ծառայության ղեկավարների ոչ մասնագետ լինելու հետեւանք են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽԱԽՏԵԼ Է ՕՐԱԿԱՐԳԸ

ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Կոռուպցիայի կանխագելման հանձնաժողովը վարույթ է հարուցել Թալինի համայնքապետ Տավրոս Սափեյանի նկատմամբ դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռի բակում հնչեցրած հայհոյանքների պատճառով:



Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննության է առել ArmLur.am-ի «Հայհոյանք, վիրավորանք. ՔՊ-ի կանոնագիրքն ընդունվեց ու խախտվեց 2 շաբաթ անց» վերտառությամբ հոդվածը:

Ինչպես գրել էինք, Սափեյանը Մայր Աթոռի բակում, ի ցույց դնելով իր հավատարմությունն առ Նիկոլ Փաշինյան, աջ ու ձախ հայհոյում էր, իրեն պահում շարքային խուլիգանի պես, վիրավորում զոհված զինվորի ծնողին:

Որոշման մեջ ասվում է. «Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի՝ քաղաքացուն ուղղված խոսքերը կատարվել են՝ ի պատասխան նույն քաղաքացու հնչեցրած առերեւույթ վիրավորական բնույթի եւ բարձրատոն խոսքին:

Այնուամենայնիվ, անգամ այդ հանգամանքի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի վարքագիծը պարունակում է Կանոնագրքի 36-37-րդ կետերի առերեւույթ խախտման հատկանիշներ՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում իրավիճակը լարված չի եղել, քաղաքացու եւ Տ. Սափեյանի միջեւ տեւական վիճաբանություն առկա չի եղել եւ նրա խոսքն ուղղված է եղել ոչ թե քաղաքական-հասարակական գործչի, այլ մասնավոր անձի՝ քաղաքացու: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի վարքագիծն առերեւույթ կերպով չի համապատասխանել զսպվածություն դրսեւորելու պահանջին:»

Սափեյանը խախտել է հենց Նիկոլ Փաշինյանի սահմանած օրակարգը, որ այլեւս հայհոյանքին հայհոյանքով, իսկ վիրավորանքին վիրավորանքով չպետք է պատասխանել, այնինչ համայնքապետն իրեն ցուցադրելու համար անում էր անթույլատրելին:

«Երկրորդ դրվագի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ. Սափեյանի կողմից գործածվել է հայհոյախոսություն: Հանձնաժողովը գտել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից, անգամ ոչ ի պաշտոնե հանդես գալիս եւ լարված իրավիճակում, հայհոյանքի եւ վիրավորական արտահայտությունների կիրառումն ինքնին պարունակում է Կանոնագրքի 36-37-րդ կետերի առերեւույթ խախտման հատկանիշներ»,-ասվում է որոշման մեջ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է նշված երկու դեպքերի առնչությամբ նախաձեռնել վարույթ Տավրոս Սափեյանի նկատմամբ:

Հետաքրքիրն այն է, որ այս ամենը տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության էթիկայի կանոնագրքի հրապարակումից օրեր անց, իսկ խախտողը ՔՊ-ական Տավրոս Սափեյանն է, ով Թալին խոշորացված համայնքի ՔՊ խորհրդի նախագահն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՌՕՐՅԱ ՍՈՒԳ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Իսպանիայի կառավարությունը եռօրյա սուգ է հայտարարել Անդալուսիայի ինքնավար համայնքի Կորդոբա նահանգում երկու գնացքների բախման հետեւանքով 39 մարդու զոհվելու կապակցությամբ: Այս մասին հաղորդում է Sky News պարբերականը:

Ըստ հրապարակման՝ Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը, որն այցելել է վթարի վայր, հայտարարել է, որ ազգային եռօրյա սուգը կսկսվի կեսգիշերից:

Վարչապետը նաեւ խոստացել է պարզել վթարի պատճառները:

Շուրջ 170 մարդ վիրավորվել է, որոնցից 48-ը դեռ հիվանդանոցում են:

Վթարը տեղի է ունեցել հունվարի 18-ի երեկոյան, երբ Մալագա-Մադրիդ երթուղով ընթացող գնացքը դուրս է եկել գծերից եւ հայտնվել հարակից գծերի վրա, որոնցով ընթանում էր Մադրիդից Ուելվա մեկնող գնացքը: Հարվածի հետեւանքով այս գնացքը նույնպես դուրս է եկել գծերից:

Երկու գնացքում եղել է շուրջ 400 ուղեւոր: Վթարի պատճառը դեռեւս հայտնի չէ: Իսպանիայի տրանսպորտի նախարարն ավելի վաղ հայտնել էր, որ «շատ տարօրինակ» է, որ գնացքը գծերից դուրս է եկել երկաթգծի ուղիղ հատվածում, որի վերանորոգման համար մայիսին հատկացվել էր 700 միլիոն եվրո: Ըստ նախարարի՝ նոր էր նաեւ գնացքը:

Ջոհերի եւ վիրավորների մեծ մասը եղել են Ուելվա ուղեւորվող գնացքի առջեւի վագոններում: Ջոհերի մի մասին դեռ չի հաջողվել նույնականացնել:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՆՑԼԵՐԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը հայտարարել է, որ ցանկանում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ ուղղակիորեն քննարկել Գրենլանդիայի շուրջ ծագած հակամարտությունը: Հանդիպումը կարող է կայանալ արդեն հունվարի 21-ին՝ Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում, հայտնում է Bild-ը:

«Ես դա չեմ ցանկանում, բայց եթե անհրաժեշտ լինի, մենք, անշուշտ, կպաշտպանենք եվրոպական շահերը, ինչպես նաեւ Գերմանիայի ազգային շահերը», - ասել է Մերցը:

Միեւնույն ժամանակ, կանցլերն ընդգծել է, որ լրջորեն է վերաբերվում Գրենլանդիայի ռազմական անվտանգության վերաբերյալ փաստարկներին, սակայն վերապահումներով: Նա հիշեցրել է, որ նախկինում ԱՄՆ-ն ինքն էր կղզում հազարավոր զինծառայողներ պահում:

«Ներկայում դրանց թիվը 200-ից պակաս է: Հետեւաբար, ակնհայտ է, որ սպառնալիքների վերլուծությունը, նույնիսկ հենց Միացյալ Նահանգների կողմից, այնքան դրամատիկ չէ, որքան այն այժմ ներկայացվում է: Ինչը չի նշանակում, թե այն չի կարող նորից աճել», - նշել է Մերցը:

Դոնալդ Թրամփն ավելի վաղ բազմիցս հայտարարել էր, որ ԱՄՆ-ն պետք է իր վերահսկողության տակ վերցնի կղզին՝ վկայակոչելով Արկտիկայում ունեցած ռազմավարական շահերը: Դանիան, որի կազմի մեջ է մտնում Գրենլանդիան, մերժում է այդ հայտարարությունները:

● *Հունվարի 12-ից 19-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 5217 խախտում:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ

ՄԵՐԺՈՒՄ Է

Ֆրանսիան պատրաստվում է մերժել Գազայի հարցով խաղաղության խորհրդին միանալու հրավերը: Այս մասին հայտնում է Reuters-ը՝ վկայակոչելով Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնին մոտ գտնվող աղբյուրին: «Այս փուլում Ֆրանսիան մտադիր է մերժել Թրամփի Խաղաղության խորհրդին միանալու հրավերը»,- հայտնում է լրատվամիջոցը: Գործակալությունը, վկայակոչելով աղբյուրին, նշում է, որ այս նախաձեռնությունը լուրջ հարցեր է առաջացնում ՄԱԿ-ի դերի վերաբերյալ, որը «չի կարող կասկածի տակ դրվել»: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է Գազայի հարցով Խաղաղության խորհուրդ ձեւավորելու մասին՝ մի շարք երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի եւ Բելառուսի ղեկավարներին հրավիրելով միանալ դրան: 2025թ. նոյեմբերի կեսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հաստատել էր ԱՄՆ առաջարկած բանաձեւը ի աջակցություն Գազայի հատվածում իրավիճակի կարգավորմանը միտված Թրամփի համապարփակ ծրագրի: Խորհրդի 15 անդամներից 13-ը կողմ էին քվեարկել այդ առաջարկին, իսկ Ռուսաստանը եւ Չինաստանը մնացել էին ձեռնպահ:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2026թ-ի փետրվարի 3-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 1 լոտ՝ ոսկյա զարդեր 42.6գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 41.7գր), որից 36.4գր ընդհանուր քաշով ոսկյա զարդեր (զուտ քաշը 35.5գր) 585 հարգի՝ 1.143.900 ՀՀ դրամ, 6.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ 958 հարգի՝ 327.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.471.000 ՀՀ դրամ: Թիվ 2 լոտ՝ոսկյա զարդ 32.9գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 32.7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.053.600 ՀՀ դրամ: Թիվ 3 լոտ՝ոսկյա ջարդոն 20.9գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 20գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 644.400 ՀՀ դրամ: Թիվ 4 լոտ՝ ոսկյա ջարդոն 8.4գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 6.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 209.400 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

TELCELL-Ի ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱԲՈՒ ԴԱԲԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՈՄՍ, iPhone ԵՎ ԱՅԼ ՆՎԵՐՆԵՐ

7-օրյա ուղեւորություն դեպի Աբու Դաբի, iPhone, MacBook, Dyson վարսահարդարիչ եւ այլ նվերներ. Telcell-ն ամփոփեց խաղարկության արդյունքները: Telcell Wallet-ի 12 հաջողակ օգտատերերը հուզված էին, ոգեւորված:

Հավելվածի հաջողակ օգտատերերից Լիանա Պետրոսյանը, երբ տեղեկացել է Աբու Դաբի ուղեւորության 2 տոմս շահելու մասին, մի պահ անգամ չի հավատացել:

«Անկեղծ ասած, մի պահ չհավատացի, հետո խոսելու ունակությունս կորցրեցի: Տոմսը, երբ որ ստանամ, գնալու եմ ամուսնուս հետո հանգստանալու: Telcell հավելվածի միջոցով կատարել եմ վճարումներ: Հիմնականում Ռուսաստանից գումարներ ենք փոխանցում, կոմունալ վճարումներն եմ կատարում: Արագ, մատչելի վճարումներ կատարելու տարբերակ է Telcell wallet-ը: Խորհուրդ կտամ, որ բոլորն էլ մասնակցեն, մի օր կշահեն անսպասելի»,-ասում է Լիանա Պետրոսյանը:

Telcell-ի մեծ խաղարկությանը մասնակցության պայմանները պարզ էին. պետք էր պարզապես հավաքել խաղարկության կտրոններ: Իսկ կտրոն կարելի էր ձեռք բերել Telcell Wallet-ով BON-եր փոխանակելով եւ տրանսպորտի ուղեւորմս/փաթեթ ձեռք բերելով, ինչպես նաեւ Telcell Wallet-ում Telcell Visa թվային քարտ ստեղծելով, Ռուսաստանից գումար ստանալով, Telcell Wallet-ով վճարումներ կատարելով եւ այլ գործարքներով:

«Շնորհավորում ենք բոլորիդ այս մրցանակի կապակցությամբ: Շնորհակալ ենք, որ օգտվում եք մեր Telcell Wallet-ից, շնորհակալ ենք, որ մասնակցել եք խաղարկությանը: Դա մեզ համար, իհարկե, ամենամեծ գնահատականն է: Շարունակեք օգտվել Telcell Wallet-ից եւ կկարողանաք իմանալ մեր բոլոր նոր ակցիաների, խաղարկությունների եւ վճարումների մասին»,- ասում է Telcell Wallet հավելվածի պատասխանատու Տաթեւիկ Առուշանյանը:

Լարիսա Հակոբյանը Telcell Wallet-ից հաճախ է օգտվում: Շահած iPhone-ը նվիրելու է աղջկան, ամենաբուռն արձագանքը հենց ինքն է տվել:

«Օրը կարող է 3-4, պարտադիր ամեն օր օգտվում եմ, պարտադիր: Անակնկալ էր ինձ համար շահումը: Կոմունալները, մուծումները, վճարումները, ինչը, որ կապված է ընտանիքի հոգսերը հոգալու համար վճարումների հետ կապված, կատարել եմ Telcell Wallet-ով»,-ասում է Լարիսա Հակոբյանը:

Խաղարկության հաղթողներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ ուղիղ եթերում:

Գոհար Եղիազարյանի համար շահումը՝ Dyson վարսահարդարիչը, եւս մեծ անակնկալ է եղել:

«Գործարքներս հիմնականում եղել են Telcell-ով, վարկերն եմ մուծել, կոմունալներն եմ մուծել եւ փոխանցումներ շատ արել տարբեր տեղեր: Բարձր որակով աշխատող կազմակերպություն է Telcell-ը: Խորհուրդ կտամ բոլորին օգտվել Telcell-ից եւ ունենալ այն զգացողությունները, ոնց ես եմ ունեցել»,-ասում է Գոհար Եղիազարյանը:

Telcell-ը հորդորում է հարմարավետ ու արագ վճարումների եւ այլ գործարքների համար շարունակել օգտվել Telcell Wallet-ից. նոր անակնկալներն առջեւում են:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ

Մոլդովան Անկախ պետությունների համագործակցության կազմից դուրս գալու ընթացակարգ է մեկնարկել, հայտարարել է հանրապետության արտաքին գործերի նախարար Մ. Պոպշոյը: Այս մասին տեղեկացնում է «Ինտերֆաքս» գործակալությունը: Նշվում է, որ Ազգային ռադիոյին տված հարցազրույցում նախարարն ասել է, որ Քիշնեւը սկսել է ԱՊՀ-ին իր անդամակցությունն ապահովող հիմնական համաձայնագրերի չեղարկման գործընթացը:

«Մոլդովայի՝ ԱՊՀ-ին անդամակցության հիմքում ընկած համաձայնագրերի չեղարկումը գտնվում է քննարկման փուլում, եւ (փաստաթղթերը) շուտով կներկայացվեն խորհրդարանի հաստատմանը: Խոսքը 1993թ. հունվարի 22-ին Մինսկում ստորագրված ԱՊՀ-ի կանոնադրության, 1991թ. դեկտեմբերի 8-ին ԱՊՀ-ի ստեղծման համաձայնագրի եւ դրա 1991թ. դեկտեմբերի 22-ի հավելվածի մասին է: Այս համաձայնագրերի չեղարկումը, որոնք մեր ներկայության հիմքն են ԱՊՀ-ում, մեզ իրավունք կտա հայտարարել, որ իրավական տեսանկյունից Մոլդովայի Հանրապետությունը պաշտոնապես այլեւս չի լինի ԱՊՀ-ի մաս: Այս գործընթացն արդեն սկսվել է. մենք այս որոշումը վերջերս ենք ընդունել, եւ հաստատման գործընթացը սկսվել է», -հայտարարել է Պոպշոյը: Նրա խոսքով՝ ԱՊՀ-ի հետ մյուս համաձայնագրերը, որոնք օգուտ են բերում Մոլդովայի քաղաքացիներին, կշարունակեն գործել:

«Փետրվարի կեսերին մենք, հավանաբար, կավարտենք գործընթացները կառավարությունում, որից հետո այս որոշումը կընդունվի խորհրդարանի պատգամավորների կողմից…. Առանձին համաձայնագրեր, քանի դեռ դրանք չեն հակասում մեր դիրքորոշմանը եվրոպական երկրներում եւ որոշակի օգուտներ են բերում, հիմքեր չունեն չեղարկման համար: Սակայն իրավաբանորեն Մոլդովայի Հանրապետությունն ամենակարճ ժամկետներում պաշտոնապես այլեւս չի լինի ԱՊՀ-ի կազմում»,-ընդգծել է պաշտոնյան:Նա հիշեցրել է, որ Մոլդովան ԱՊՀ-ի հետ ստորագրել է ընդհանուր առմամբ 283 համաձայնագիր, որոնցից 71-ն արդեն չեղյալ են հայտարարվել, իսկ մոտավորապես 60-ը գտնվում են չեղարկման գործընթացում:

ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը 2025 թվականին մթնոլորտային օդի պահպանության ուղղությամբ արձանագրել է 617 իրավախախտման դեպք: 2024 թվականին նշված ուղղությամբ տեսչական մարմնի կողմից արձանագրված իրավախախտումների թիվը կազմել է 397: «Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը նշեց, որ ընդհանուր տուգանքների չափը կազմել է 34 մլն 980 հազար դրամ՝ 2024-ի 31 մլն 650 հազարի դիմաց:

«63 դեպքով հաշվարկվել է մթնոլորտային օդին պատճառված վնասի չափը, որը կազմում է 160 մլն 881 հազար դրամ: Ընդգծեմ, որ ընդհանուր արձանագրած 617 իրավախախտման դեպքից միայն 217-ը գրանցվել է Երեւանում: 15 դեպք արձանագրել ենք առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխման ժամանակ: Սա Երեւանի համար դրական ցուցանիշ է, որովհետեւ երբ այս միջոցառումը սկսում էինք իրականացնել, օրինակ, 2021 թվականին, մեկ շաբաթվա ընթացքում 127-ից ավելի դեպք էինք արձանագրել: Ժամանակը ցույց տվեց, որ մեր վարորդների մոտ այդ առումով պատշաճ վարքագիծ է ձեւավորվում»,-ասաց Հովհաննես Մարտիրոսյանը: Մթնոլորտային օդի պահպանության ուղղությամբ իրավախախտման 99 դեպք է գրանցվել շինարարության ոլորտում, հանքարդյունաբերության ոլորտում՝ 15 դեպք: Տարվա ընթացքում խոզանների, տերեւների, թափոնների, մալուխների այրման 226 դեպք է արձանագրվել:

«Եւս մեկ անգամ հորդորում եմ մեր քաղաքացիներին խոզանների, տերեւների այրում չիրականացնեն: Դա որեւէ օգուտ չի բերում, հակառակը՝ աղտոտում է օդը, առողջությանը վնաս է, դրանից բացի հողերի դեգրադացիա է առաջացնում եւ ընդհանրապես հողի բերքատվությունը ցածրացնում է»,-ասաց Հ. Մարտիրոսյանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Հ. ՑԻՄԵՐԸ ԿՀԵՂԻՆԱԿԻ ՍԱՈՒՆԴԹՐԵՔԸ

ՀԱՐԻ ՓՈԹԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՍԵՐՆԴԻ ՀԱՅԵԼԻ

Գերմանացի ականավոր կոմպոզիտոր Հանս Ցիմերը, որը երաժշտություն է գրել ավելի քան 50 ֆիլմերի, համակարգչային խաղերի համար, կհեղինակի նաեւ «Հարի Փոթեր» սերիալի սաունդթրեքը: Նրա գրեթե յուրաքանչյուր ստեղծագործություն դառնում է «հիթ»: Այս մասին տեղեկություն է հրապարակվել Ցիմերի «Ինստագրամ»-ի պաշտոնական էջում:

Երաժշտության շուրջ Ցիմերն աշխատելու է իր Bleeding Fingers Music երաժշտական ընկերության թիմի հետ:

HBO-ի «Հարի Փոթեր» սերիալի պրեմիերան նախատեսված է 2027 թվականին:

«Փիլիսոփայական քարը», «Գաղտնիքների սենյակը», «Ազքաբանի կալանավորը», «Կրակի գավաթը», «Փյունիկի միաբանությունը», «Կիսարյուն արքայազնը» եւ «Մահվան պարգեւները» գրքերից յուրաքանչյուրը կվերածվի հեռուստատեսային եթերաշրջանի:

Հարի Փոթեր ֆիլմաշարը բաղկացած է 8 ֆիլմից, որոնք նկարահանվել են Ջ. Ք. Ռոուլինգի համանուն գրքերի հիման վրա:

Ինչո՞ւ է Հարի Փոթերը մինչ այսօր խոսում մեծերի հետ

Վախի, ընտրության եւ իշխանության մասին պատմություն

Հարի Փոթերի ֆիլմաշարը վաղուց դադարել է լինել միայն մանկական ֆանտազիա: Տարիներ անց այն շարունակում է հետաքրքրել նաեւ մեծահասակներին, քանի որ խոսում է իրական խնդիրների մասին՝ վախ, իշխանություն, ընտրություն եւ պատասխանատվություն:

Պատմության գլխավոր հերոսը մեծանում է մերժված միջավայրում: Նրա մանկությունը լի է անտեսմամբ եւ ճնշմամբ: Հարի Փոթերի ուժը սկզբում կախարդական չէ. նա ուժեղ է դառնում դիմակայելու կարողությամբ: Ֆիլմաշարը այս կերպ ընդգծում է մի կարեւոր գաղափար՝ մարդուն ձեւավորում են ոչ թե ունակությունները, այլ ճնշման պայմաններում կատարած ընտրությունները:

Վոլդեմորտի կերպարը նույն ճանապարհի հակառակ արդյունքն է: Նա առաջնորդվում է մահվան վախով, որը աստիճանաբար վերածվում է իշխանության մոլուցքի: Ֆիլմաշարը ցույց է տալիս, որ չարը ծնունդ չէ, այլ ձեւավորվում է վախի եւ մեկուսացման հետեւանքով:

Հոգվարթսը ներկայացվում է ոչ միայն որպես դպրոց, այլ որպես հասարակության մոդել: Այստեղ առկա են բաժանումներ, հիերարխիա եւ խտրականություն: «Մաքուր արյան» գաղափարը ակնարկում է իրական աշխարհում գոյություն ունեցող սոցիալական բաժանումները: Դոլորես Ամբրիջի կերպարը հատկապես խոսուն է՝ որպես իշխանություն, որը գործում է օրենքի եւ կարգապահության անվան տակ:

Ֆիլմաշարի կարեւոր թեմաներից մեկը մահվան ընկալումն է: Վոլդեմորտը ձգտում է անմահության, մինչդեռ Հարի Փոթերի ուժը բացահայտվում է զոհաբերության պատրաստակամության մեջ: Այս հակադրությունն ընդգծում է ֆիլմաշարի հիմնական ուղերձը՝ մարդկայնությունն ավելի ուժեղ է, քան վախը:

Հարի Փոթերի պատմությունը, ի վերջո, ընտրության մասին է: Այստեղ ճակատագիրը երբեք վերջնական չէ: Յուրաքանչյուր կերպար պատասխանատու է իր որոշումների համար: Հենց այս պատճառով էլ Հարի Փոթերը շարունակում է մնալ արդիական՝ որպես պատմություն, որը դուրս է եկել ֆանտազիայի սահմաններից եւ դարձել հասարակական հայելի:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽԱՉԱՆՈՎԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ, աշխարհի 17-րդ ռակետ Կարեն Խաչանովը հաղթանակով է մեկնարկել «Մեծ սաղավարտի» տարվա առաջին մրցաշարում՝ Ավստրալիայի բաց առաջնությունում:

Մելբուռնում ընթացող «Australian Open»-ի՝ տղամարդկանց մենախաղի առաջին շրջանում Կարեն Խաչանովի մրցակիցը ԱՄՆ ներկայացուցիչ Ալեքս Միշելսենն էր: Մոտ 4 ժամ ձգված մրցախաղում Խաչանովը հաղթանակի հասավ 5 սեթից հետո՝4:6, 6:4, 6:3, 5:7, 6:3 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 18-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Խաչանովը Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է:

ԶԻԴԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիան (FFF) պաշտոնական գործընթաց է սկսել Զինեդին Զիդանին ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում նշանակելու ուղղությամբ: Նախատեսվում է, որ նշանակումը տեղի կունենա 2026 թվականի Աշխարհի առաջնության ավարտից անմիջապես հետո:

Հեղինակավոր L'Equipe պարբերականի փոխանցմամբ՝ ֆեդերացիան արդեն կոնկրետ քայլեր է ձեռնարկել լեգենդար ֆրանսիացուն թիմ հրավիրելու նպատակով: Սպասվում է, որ «եռագույնների» ներկայիս գլխավոր մարզիչ Դիդիե Դեշամը կլքի զբաղեցրած պաշտոնը 2026 թվականի ամռանը կայանալիք Մունդիալից հետո՝ղեկը զիջելով նոր առաջնորդին:

Զինեդին Զիդանը մարզչական գործունեությամբ չի զբաղվում 2021 թվականի ամռանից ի վեր, երբ ավարտվեց նրա երկրորդ ժամկետը Մադրիդի «Ռեալի» ղեկին: Չնայած երկարատեւ դադարին եւ տարբեր թոփ նախագծերի հետ կապված մշտական խոսակցություններին՝ նա մինչ օրս որեւէ այլ ակումբ չի գլխավորել:

Զիդանն իրավամբ համարվում է «արքայական» ակումբի պատմության ամենահաջողակ մասնագետներից մեկը: Նրա գլխավորությամբ մադրիդցիները գրանցել են ֆենոմենալ ցուցանիշներ՝ հաղթելով Չեմպիոնների լիգան երեք անգամ անընդմեջ, երկու անգամ դառնալով Լա Լիգայի չեմպիոն, ինչպես նաեւ երկուական անգամ նվաճելով ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթն ու Իսպանիայի Սուպերգավաթը եւ հաղթելով ՖԻՖԱ-ի աշխարհի ակումբային առաջնությունը:

Թեեւ մամուլում պարբերաբար շրջանառվում էին «Ռեալ» նրա հնարավոր վերադարձի մասին լուրեր, իրադարձությունների ներկայիս զարգացումը վկայում է, որ Զիդանի կարիերայի հաջորդ կանգառը լինելու է հենց Ֆրանսիայի ազգային հավաքականը:

ԺԱՄԱՆՑ

ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԵԼ Է

Դերասանուհի Անահիտ Կիրակոսյանն ու Արտակ Սարգսյանն ամուսնությունից 14 տարի անց որոշել են բաժանվել: Այս մասին դերասանուհին հայտնել է սոցիալական ցանցերի իր էջերում:

«14 տարի՝ լի պատմություններով, փորձություններով ու մեծ նվերներով՝ մեր երեխաներով ու թոռնիկներով:

Այսօր մեր ճանապարհները բաժանվում են, բայց հարգանքը, միմյանց հանդեպ հոգատարությունն ու ընտանիքի արժեքը մնում են: Մենք դադարում ենք լինել ամուսիններ, բայց շարունակում ենք մնալ 4 հրաշալի զավակների ծնողներ, հրաշք թոռնիկների տատիկ ու պապիկ:

Կյանքը միշտ չէ, որ գնում է մեր պատկերացրած սցենարով:

Երբեմն պետք է ընդունել ավարտը՝ շնորհակալ լինելով անցած ճանապարհի համար:

Սիրելի հարազատներ, բարեկամներ եւ մեզ լավը կամեցող մարդիկ՝ խնդրում եմ այս փուլում զերծ մնալ հարցերից ու մեկնաբանություններից: Ձեր ըմբռնումը, լռությունն ու հարգանքը այս պահին ամենամեծ աջակցությունն են ինձ համար: Շնորհակալ եմ»,-գրել է դերասանուհին:

ԲԵԼԼԱ ՀԱԴԻԴԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է

Բելլա Հադիդը հրապարակայնորեն խոսել է Dolce & Gabbana նորաձեւության տան դեմ՝ մեղադրելով ապրանքանիշին «տարիներ շարունակ ռասիզմի, սեքսիզմի, մոլեռանդության եւ քսենոֆոբիայի» մեջ՝ Միլանի նորաձեւության շաբաթվա ցուցադրությանը սպիտակամորթ դերասաններ ներկայացնելու համար:

29-ամյա սուպերմոդելը խոսել է այն բանից հետո, երբ շաբաթ օրը ապրանքանիշը քննադատության է ենթարկվել Միլանի նորաձեւության շաբաթվա ցուցադրությանը սպիտակամորթ դերասանուհիներ ներկայացնելու համար:

Բելլան մեկնաբանություն է գրել նորաձեւության մեկնաբան եւ սոցիալական ցանցերի անձնավորություն Լիասի գրառման տակ՝նշելով, որ «շոկի մեջ է, որ որոշ հայտնիներ դեռեւս հրապարակայնորեն աջակցում են D&G-ին»:

Սա ապրանքանիշի շուրջ սկանդալների երկար շարքի վերջին դեպքն է: Նախկինում դրա համահիմնադիրներ Դոմենիկո Դոլչեն եւ Ստեֆանո Գաբանան 2013 թվականին դատապարտվել են հարկերից խուսափելու համար եւ բազմիցս քննադատության են ենթարկվել նաեւ արտամարմնային բեղմնավորման վերաբերյալ իրենց մեկնաբանությունների համար: Տեսանյութում, որի տակ Բելլան թողել է իր մեկնաբանությունը, Լիասը հուզականորեն արձագանքում է այն փաստին, որ D&G-ի ցուցադրության ժամանակ «ոչ մի ասիացի մոդել կամ ոչ մի սեւամորթ կին չի եղել»:

Բելլան, որը երբեք չի մասնակցել Dolce & Gabbana-ի ցուցադրությանը, մեկնաբանություններում գրել է. «Շոկային է, որ մարդիկ դեռ աջակցում են այս ընկերությանը. դա ամոթալի է: Մոդելները, ոճաբանները, քասթինգը՝ բոլորը»:

Այնուհետեւ նա ավելացրել է. «@bellahadid-ը չեղարկել է վաղուց... տարիներ շարունակ ռասիզմ, սեքսիզմ, մոլեռանդություն եւ քսենոֆոբիա... ինչպե՞ս կարող ենք դեռ զարմանալ»:

Նորաձեւության տան 1985 թվականին հիմնադրվելուց ի վեր Դոմենիկո Դոլչեն եւ Ստեֆանո Գաբանան հայտնվել են բազմաթիվ սկանդալների կենտրոնում:

Մի շարք բարձրաստիճան անհաջողություններ սկսել են գովազդից, որտեղ մոդելները դանակներով հարձակվում էին միմյանց վրա, որին հաջորդել են Դոլչեի վիրավորական դիտողությունները արտամարմնային բեղմնավորման երեխաների մասին, եւ գագաթնակետին են հասել, երբ նա դերասանուհի Սելենա Գոմեսին անվանել է «տգեղ»:

● Հունվարի 21-ին՝ժամը 19:00-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մարդուկ-Ջարդուկը» բալետը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել, եթե ներկայացրել եմ հանցագործության մասին հաղորդում, իսկ իրավապահ մարմինն իմ տվյալները փոխանցել է իրավախախտին:

Արթուր Վարդանյան, 45 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ներկայացրել եք առերեւույթ հանցագործության մասին հաղորդում, իսկ իրավապահ մարմինը Ձեր անձնական տվյալներն առանց Ձեր համաձայնության ապօրինաբար փոխանցել է իրավախախտ անձին, ապա անհրաժեշտ է հիշել, որ տվյալների փոխանցում իրականացրած անձն իրավունք չուներ կատարելու նման գործողություն:

Ընդ որում, կախված նրա կողմից տվյալներն այլ անձի փոխանցելու նպատակից եւ առաջացած հետեւանքներից՝ փոխանցման փաստը կարող է դառնալ կարգապահական վարույթի (ծառայողական քննության) հիմք, որակվել որպես վարչական իրավախախտում կամ հանցագործություն:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անձնական տվյալների պաշտպանությունը Սահմանադրությամբ եւ մի շարք միջազգային փաստաթղթերով պաշտպանվող իրավունք է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը նախատեսում է բավականին խոշոր տուգանքներ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը խախտելու համար (հոդված 189.17):

Օրինակ՝ իրավախախտ անձը փորձում է Ձեզ վրա ճնշում գործադրել, սակայն չի ստանում իր համար ցանկալի արդյունքը), ապա դա, միեւնույն է, հանցագործություն է, տվյալ դեպքում՝ չավարտված (հանցափորձ):

Ըստ այդմ՝ կարող եք դիմել Դատախազություն (+374 (10) 511-650, info@prosecutor.am), Հակակոռուպցիոն կոմիտե (+374-11-900-035, press@anticorruption.am), իրավապաշտպան կազմակերպություններ (օրինակ՝ ՀՔԱՎ, +374 94 042268 եւ +374 77 032268, info@hcav.am), փաստաբանի (ՀՊԳ հեռախոսահամար՝ +374 10 600714, info@advocates.am) եւ/կամ Մարդու իրավունքների պաշտպանին (շուրջօրյա հեռախոսահամար՝ +374 96 116100, ombuds@ombuds.am):

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԴԱՏԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կինս սպառնում է, որ առանց իմ համաձայնության մեր երեխային կտանի երկրից. ի՞նչ անեմ եւ ո՞ւմ դիմեմ:

Սերգեյ Կիրակոսյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխայի ապօրինի ելքը երկրից կանխելու նպատակով անհրաժեշտ է դիմել դատարան՝ ներկայացնելով երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջ: Այս պահանջը ներկայացնելուն զուգահեռ՝ անհրաժեշտ է, որ դատարանին հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն ներկայացնեք՝ խնդրելով մինչեւ գործի ավարտն արգելել պետական իրավասու մարմիններին թույլատրել երեխայի ելքը ՀՀ-ից: Այս միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում դատական ակտի պահանջը կկատարվի ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, որը համապատասխան գրություններ կուղարկի սահմանապահ մարմիններին՝ պահանջելով արգելել երեխայի ելքը ՀՀ-ից: ՀՀ-ից երեխայի ելքն արգելելու միջնորդությունը կարող եք հիմնավորել նրանով, որ եթե ապագայում դատարանը բավարարի տեսակցության կարգ սահմանելու մասին պահանջը, ապա Դուք իրավունք կունենաք երեխային տեսակցել ըստ սահմանված տեսակցության կարգի, եւ եթե երեխային արդեն իսկ դուրս տարած լինեն երկրից, ապա դատական ակտի կատարումը կդառնա անհնարին:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անձի ազատ տեղաշարժման իրավունքը ՀՀ տարածքով կամ դրանից դուրս՝ որպես կարեւորագույն իրավունք, սահմանված է ՀՀ Սահմանադրության մեջ, եւ այդ իրավունքը կարող է սահմանափակել միայն բացառիկ դեպքերում, այն էլ՝ դատարանի որոշման հիման վրա: Ներկայում գործնականում կան մի շարք երկրներ (օրինակ՝ Վրաստան, ՌԴ եւ այլն), որոնք սահմանը հատելուց չեն պահանջում մյուս ծնողի գրավոր համաձայնությունը եւ բավարարվում են միայն նրանով, որ անչափահաս երեխային ուղեկցում է նրա ծնողը: Իսկ մի շարք այլ երկրներում, որտեղ տրամադրվում են վիզաներ, պահանջվում է պարտադիր ներկայացնել երեխայի մյուս ծնողի գրավոր համաձայնությունը, այն էլ՝ նոտարական կարգով վավերացված տարբերակով, եւ եթե ծնողը դա չի ներկայացնում, ապա այդ պետությունները արգելում են երեխայի մուտքն իրենց երկրի տարածք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Աբովյան փողոցում

Երբ «ծանր աշխատանքային» օրվանից հետո այս «հորանջը» պաշտոնական հայտարարություն է՝ ես գնացի քնելու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 16 - 21 - 4 - 8
	Կոտայքի լեռներ	-16 - 19 - 5 - 8
	Կոտայքի նախալեռներ	- 8 - 12 - 1 - 4
	Գեղարքունիք	- 10 - 15 - 4 - 8
	Լոռի	-12 - 17 -1 - 4
	Տավուշ	- 8 - 12 - 2 + 1
	Արագածոտնի լեռներ	- 16 - 20 - 5 - 8
	Արագածոտնի նախալեռներ	- 7 - 12 - 1 - 5

	Արարատ	- 6 - 9 - 2 + 1
	Արմավիր	- 6 - 9 - 1 + 2
	Վայոց ձորի լեռներ	-10 - 13 -4 -8
	Վայոց ձորի նախալեռներ	- 12 - 16 - 5 - 8
	Սյունիքի լեռներ	-14 - 18 -5 - 8
	Սյունիքի նախալեռներ	- 10 -15 - 1 - 4
	Սյունիքի հովիտներ	- 3 - 7 0 + 3
	Երեւան	- 9 - 6 - 5 - 3

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.01.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*